ՀՀ ԱՆ «Վ.Ա.ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Audit
ARMENIA

Բովանդակություն

3 Անկախ աուդիտորական եզրակացություն

6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

7 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

8 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

9 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է ՀՀ ԱՆ «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել ՀՀ ԱՆ «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից 16 ծանոթագրության վրա, որտեղ ներկայացված է Ընկերության աշխատողների կուտակված փոխհատուցելի բացակայությունների գծով մնացորդը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հարցի առնչությամբ:

Այլ հանգամանք

Ընկերության 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության

անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
20 հունիսի, 2023թ.
Ք. Երևան

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար

«ԱՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
«AUDIT ARMENIA»
«АУДИТ АРМЕНИЯ»
01569467

«Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՈՒՌՈՒՅՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	9,594,140	9,547,878
Կառուցման ընթացքում գտնվող շինություն	5	568,112	225,552
Ոչ նյութական ակտիվներ	6	9,151	9,480
		10,171,403	9,782,910
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	239,895	338,970
Դեբիտորական պարտքեր	8	191,383	183,488
Դրամական միջոցներ	9	62,416	120,056
		493,694	642,514
Ընդամենը ակտիվներ		10,665,097	10,425,424
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	10	607,370	607,370
Էմիսիոն եկամուտ	10	17,876	17,876
Չբաշխված շահույթ		2,298,221	2,184,785
Պահուստային կապիտալ	10	155,329	87,229
Վերագնահատման պահուստ	10	3,216,684	3,219,964
		6,295,480	6,117,224
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	11	182,917	224,917
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	279,197	396,670
Ակտիվներին վերաբերող շնորհներ	13	725,814	1,078,500
		1,187,928	1,700,087
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	11	310,154	228,704
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	1,230,141	749,993
Եկամուտներին վերաբերող շնորհներ	14	52,084	184,005
Ընթացիկ պահուստներ	16	1,521,586	1,393,522
Շահութահարկի գծով պարտավորություն		67,724	51,889
		3,181,689	2,608,113
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		10,665,097	10,425,424

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 20-ին.

Տնօրեն — Գլխավոր հաշվապահ

Նարեկ Մանուկյան — Հասմիկ Հանեսյան

«Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՈՒՌՈՒՅՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Հասույթ	17	5,630,930	4,878,305
Վաճառքի ինքնարժեք	18	(4,878,786)	(4,253,023)
Համախառն շահույթ		752,144	625,282
Այլ եկամուտ	19	1,216,471	990,250
Իրացման ծախսեր		-	-
Վարչական ծախսեր	20	(539,219)	(541,744)
Այլ ծախսեր	21	(1,053,448)	(885,972)
Գործառնական գործունեությունից շահույթ		375,948	187,816
Ֆինանսական ծախս	22	(17,164)	(18,229)
Այլ ֆինանսական հոդվածներ	23	3,577	4,646
Շահույթ մինչև հարկերը		362,361	174,233
Շահութահարկի գծով ծախս	24	13,514	(27,657)
Տարվա շահույթ		375,875	146,576
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ		375,875	146,576

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 20-ին՝

Տնօրեն Նարեկ Մանուկյան

Գլխավոր հաշվապահ Հասմիկ Հանեսյան

«Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՈՒՌՈՒՅՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնահատման պահուստ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2021թ հունվարի 1-ի դրությամբ	607,370	17,876	-	87,229	2,116,686	2,829,161
Տարվա շահույթ			-	-	146,576	146,576
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-		-	146,576	146,576
Վերագնահատման պահուստ	-	-	3,219,964	-	-	3,219,964
Շահաբաժիններ	-	-	-	-	(78,573)	(78,573)
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	607,370	17,876	3,219,964	87,229	2,184,689	6,117,128
Ներքին շարժ			(3,280)	68,100	(70,634)	(5,814)
Տարվա շահույթ	-	-	-	-	375,875	375,875
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	375,875	375,875
Շահաբաժիններ	-	-	-	-	(191,709)	(191,709)
2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	607,370	17,876	3,216,684	155,329	2,298,221	6,295,480

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 20-ին՝

Տնօրեն Նարեկ Մանուկյան

Գլխավոր հաշվապահ Հասմիկ Հանեսյան

Ֆինանսական հաշվետվություններին նիզ ծանոթագրություններ կցվում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ

«Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՈՒՌՈՒԻՖՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ծառայությունների իրացումից մուտքեր	5,740,463	4,897,019
Այլ գործունեությունից մուտքեր	124,253	155,723
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	5,864,716	5,052,742
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(2,901,493)	(2,423,794)
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(1,395,149)	(1,291,124)
Վճարումներ բյուջե, բացառությամբ շահութահարկի	(953,978)	(821,726)
Վճարված շահութահարկ	(94,080)	(38,491)
Այլ ելքեր	(23,540)	(21,855)
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	(5,368,240)	(4,596,990)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	496,476	455,752
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում, զուտ	(451,451)	(422,349)
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(451,451)	(422,349)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի ստացումից մուտքեր	167,600	199,991
Վարկերի մարումից ելքեր	(173,367)	(77,442)
Վճարված շահաբաժիններ	(78,573)	-
Վճարված տոկոսներ	(19,343)	(40,831)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(103,683)	81,718
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(58,658)	115,121
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	1,018	(325)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	120,056	5,260
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	62,416	120,056

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 20-ին

Տնօրեն Գլխավոր հաշվապահ

Նարեկ Մանուկյան Հասմիկ Հանեսյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ (այսուհետ Ընկերություն) ստեղծվել է ՀՀ Կառավարության 30.10.2003թ. «Երևան քաղաքի առողջապահական հաստատությունների օպտիմալացման շրջանակներում մի շարք բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմելու մասին» թիվ 1413-Ն որոշման (ՀՀ Կառավարության 2003թ.-ի հոկտեմբերի 30-ի դեկտեմբերի 11-ի թիվ 1634-Ն 2004թ.-ի հունվարի 22-ի թիվ 30-Ն և 2004թ. փետրվարի 19-ի 244Ն որոշումների խմբագրությամբ) համաձայն ՀՀ ԱՆ «Կ. Բազիկյանի անվան հակակոռուպցիոն դիսպանսեր» ՓԲԸ (գրանցված է ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 08.11.1996թ. վերակազմավորման գրանցման օրը՝ 31.03.1998թ. գրանցման թիվ 286.140.01871, վկայական՝ 01Ա021580, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Հանրապետության փողոց թիվ 85) և ՀՀ ԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ (գրանցված է ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 15.01.1996թ. վերակազմավորման գրանցման օրը՝ 30.06.1998թ., գրանցման թիվ 282.140.01670, վկայական 01Ա21752):

Ընկերության գործունեության հիմնական տեսակը առողջապահական գործունեությունն է, բուժօգնությունն ու սպասարկումը, որը իրականացվում է համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից անժամկետ տրամադրված Կ-XX-000973 լիցենզիայի, ինչպես նաև Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառը կարգավորող մարմնի ՀՀ ԿԱ Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից ՆՃԱՕ-351-2011 Ռադիոակտիվ նյութերի օգտագործման (երկարաձգված մինչև 31.01.2031թ.), ՆՃԱՕ-084-2007 Գեներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործման (երկարաձգված մինչև 18.04.2027թ.), ՆՃԱՕ-085-2007 Ռադոիակտիվ նյութեր պարունակող սարքերի օգտագործման (երկարաձգված մինչև 18.04.2027թ.), ՆՃԱՆ-004-2005 Ռադիոակտիվ նյութերի արտահանում (երկարաձգված մինչև 19.08.2025թ.) լիցենզիաների, Կ-ԲՕ-002917 07.06.2021թ. անժամկետ և Կ-ԲՕ-002684 12.02.2020թ. անժամկետ լիցենզիաների:

Ընկերության ֆիրմային անվանումն է՝ ՀՀ ԱՆ Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է. ՀՀ ք. Երևան, Քանաքեռ, Վ. Ա. Ֆանարջյանի փող., թիվ 76:

2021թ. Ընկերության աշխատակիցների թվաքանակը կազմել է 547 մարդ (2020թ.՝ 532 մարդ):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Ընկերությունը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է

հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

2.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:
Նշանակալի ոլորտները, որոնք ներառում են ավելի բարձր աստիճանի դատողություն, որտեղ ենթադրություններն ու գնահատումները կարևոր են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում:

2.6 Նոր և վերանայված ստանդարտներ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերությունը չի կիրառել այն նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտները, որոնք թողարկվել են, բայց դեռ ուժի մեջ չեն:

ՖՀՄՍ հիմնադրամի կողմից ավարտված ծրագրեր	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառելիությունը
Փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում. «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» և ՀՀՄՍ 28.	Դեռևս չի սահմանվել ՖՀՄՍ Խորհրդի կողմից	-
«Ներդրումներ ասոցիացված և դուստր ընկերություններում»- Ներդրողի և նրա ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև ակտիվների վաճառք կամ ներդրում		
Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և ՖՀՄՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2 (Էականության որոշման դատողությունների իրականացում) – Հաշվապահական քաղաքականության բացահայտումներ	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում. «Հիմնական միջոցներ» - Մուտքեր մինչև նախատեսված օգտագործումը	1 Հունվարի, 2022թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում. «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» - Անդրադարձ հայեցակարգային շրջանակին	1 Հունվարի, 2022թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 37. «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ – Անբարենպաստ պայմանագրեր» - Պայմանագրի կատարման արժեքը	1 Հունվարի, 2022թ.	Առաջընթաց

ՖՀՄՍ 9. «Ֆինանսական գործիքներ», ՖՀՄՍ 16 «Վարձակալություն», ՀՀՄՍ 41. «Գյուղատնտեսություն»: ՖՀՄՍ ստանդարտների տարեկան բարելավումներ 2018-2020թթ.		
Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»՝ Պարտավորությունների դասակարգումը ընթացիկի և ոչ ընթացիկի	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»՝ Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում. «Շահութահարկեր»՝ Առանձին գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց
ՖՀՄՍ 17. «Ապահովագրության պայմանագրեր»	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց

Ընկերության Ղեկավարությունը չի կանխատեսում, որ այս փոփոխությունների կիրառումն էական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

2.7 Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.

բ) ֆինանսական արդյունքի մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Ընկերությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը.

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.

դ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով ուղղակի մեթոդը: Վճարված և ստացված տոկոսներն ու շահաբաժինները ներկայացված են որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից.
Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Ընկերությունը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	5.59	6.42
ԱՄՆ դոլար	393.57	480.14
Եվրո	420.06	542.61

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչմանը, չափվում է սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման գնի համարժեքն է:
Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:
Հիմնական միջոցների օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:
Հիմնական միջոցները սկզբնական ճանաչումից հետո հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:
Հիմնական միջոցների՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:
Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:
Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	80 տարի
Կառուցվածքներ	80 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	1-10 տարի
Համակարգչային տեխնիկա	5 տարի
Տրանսպորտային միջոցներ	10 տարի
Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	1-10 տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ են համակարգչային ծրագրերը. որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով՝հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:
Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել ամորտիզացիայի հաշվարկման դրույքաչափերի, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա ամորտիզացիան վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:
Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային ծրագրեր	-	1-10 տարի,
Լիցենզիաներ	-	իրավաբանորեն ամրագրված իրավունք
Այլ ոչ նյութական ակտիվներ	-	1 տարի:

3.4 Հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխ հատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալություն

Ընկերությունը, որպես վարձակալ, մեկնարկի ամսաթվի դրությամբ ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ փոքրարժեք ակտիվների և վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորությունների, համաձայն ՖՀՄՍ 16-ի:

Սկզբնական ճանաչում

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է օգտագործման իրավունքով ակտիվը սկզբնական արժեքով, որը ներառում է.

- վարձակալության պարտավորության գծով սկզբնական չափման գումարը,
- վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ,
- վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ,և
- այն ծախսումների գնահատականը, որը վարձակալը կկրի հիմքում ընկած ակտիվը ապամոնտաժելիս կամ քանդելիս, ինչպես նաև այդ ակտիվի զբաղեցրած տեղանքը վերականգնելիս կամ հիմքում ընկած ակտիվը վերականգնելիս՝ բերելով այն վիճակի, որը պահանջվում է վարձակալության պայմանագրի ժամկետներով և պայմաններով:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Ընկերությունը պետք է չափի վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին:

տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, Ընկերությունը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հետագա չափում

Սկզբնական արժեքի մոդել կիրառելիս Ընկերությունը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով՝

- հանած՝ կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները և
- ճշգրտված՝ վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ:

Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալը վարձակալության գծով պարտավորությունը պետք է չափի՝

- ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար,
- նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար, և
- վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ ցանկացած վերանայում կամ վարձակալության վերափոխում, կամ վերանայված հաստատուն վարձավճարները արտացոլելու համար:

3.6 Պաշարներ

Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:
Ձեռքբերման ծախսումներն են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են կազմակերպությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ հոդվածներ հանվում են:
Այլ ծախսումները ինքնարժեքում ներառվում են այն չափով, ինչքանով դրանք կատարվել են պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:

Պաշարները՝ դեղեր, բժշկական պարագաներ և այլն, ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է ԱՄԱԵ(առաջին մուտք, առաջին ելք) արժեքի բանաձևով:
Բժշկական ծառայությունների մատուցման մեջ օգտագործելու նպատակով պահվող դեղերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, քանի որ ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման նպատակով դրանք օգտագործվելու են, իրացվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով:
Դեղերը կամ բժշկական պիտույքները, որոնց օգտագործման ժամկետը սպառվել է, կամ այլևս պիտանի չեն օգտագործման այլ հանգամանքներով դուրս են գրվում համապատասխան ժամանակաշրջանում:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:

3.7 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.8 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:
Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Ընկերությունը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:
Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում):
Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝
ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.
բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:
Ընկերությունը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Ընկերությունը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝
ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝
բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:
Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝
ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՝
բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝
-նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝
-տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

3.9 Շնորհներ

Շնորհները, որոնք որոշակի պայմաններով տրվում են կանոնադրական գործունեության իրականացման նպատակով, ճանաչվում են իրենց իրական արժեքով, երբ կա հիմնավորված երաշխիք, որ.

ա) Ընկերությունը կատարելու է շնորհներին հարակից պայմանները, և

բ) շնորհները ստացվելու են:

Հիմնական միջոցներին վերաբերող շնորհները հետաձգվում են և ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:
Ծախսերին վերաբերող շնորհները հետաձգվում են և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որոնց ընթաքում դրանք փոխհատուցում են այն ծախսումները, որոնց համար ստացվել են:

3.10 Պահուստ

Ընկերությունը ճանաչել է անորոշ ժամանակի կամ գումարի պարտավորությունների պահուստներ:
Պահուստը չափվում է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ ծախսերի լավագույն նախահաշվով, զեղչվում է նախահարկի դրույքաչափով՝ արտացոլելով փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և պարտավորության հատուկ ռիսկերը:

3.11 Հասույթ

Ընկերության հասույթը առաջանում է բժշկական ծառայությունների մատուցումից, որոնց համար եկամուտը ճանաչվում է դրանց մատուցման ժամանակաշրջանում:

Ընկերության հասոույթը ստացվում է ֆիքսված գնի պայմանագրերից, և հետևաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացվող եկամտի չափը որոշվում է ելնելով այդ ֆիքսված գներից:

Ապրանքների վաճառք

Ապրանքի վաճառքը ճանաչվում է ապրանքի սեփականության հետ կապված էական ռիսկերը և սեփականությունից ստացվող օգուտները հաճախորդին փոխանցելուց հետո, ինչը սովորաբար տեղի է ունենում, երբ Ընկերությունը վաճառում կամ առաքում է ապրանքը հաճախորդին, հաճախորդն ընդունում է ապրանքը, և համապատասխան դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը հիմնավորված է:

3.12 Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների, ներառյալ տնօրենները և կառավարչական անձնակազմը, մատուցած ծառայության դիմաց Ընկերության կողմից ցանկացած ձևով տրվող փոխհատուցումներն են: Աշխատակիցների հատուցումներն են.

ա) աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ամբողջությամբ մարվում են այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

բ) հետաշխատանքային հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ենթակա են վճարման աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո.

գ) աշխատակիցների այլ երկարաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի հետաշխատանքային հատուցումներից և ազատման նպաստներից), որոնք ոչ ամբողջությամբ են մարվում այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

դ) ազատման նպաստներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են, որոնք ենթակա են վճարման որպես հետևանք կամ՝

- ընկերության որոշման՝ աշխատանքից ազատել աշխատակիցներին մինչև թոշակի անցնելու ընդունված ժամկետը, կամ

- աշխատակցի որոշման՝ աշխատակիցների թվաքանակի կրճատման դեպքում կամավոր ազատվել՝ փոխարենը ստանալով այդ նպաստները:

3.13 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալի ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական

առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

IV. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը և այլն:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում

Հիմնական միջոցներ

ազար դրամ	Հողամասեր	Շենքեր, շինություններ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական և տնտեսական գույք	Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ	Ընդամենը
Կզբնական արժեք								
021թ. հունվարի 1-ի րությամբ	571,600	4,455,267	3,252,655	14,459	265,724	40,589	61,679	8,661,973
Ավելացում, կապիտալացում	-	154,999	502,788	-	154,658	540,465	-	1,352,910
Նտարում, վերադասակարգում	-	(107,520)	(146,505)	-	(7,120)	(507,963)	-	(769,108)
Վերագնահատում	2,127,916	116,797	(1,670,390)	(7,737)	(123,748)	(404)	(43,622)	398,812
021թ. դեկտեմբերի 31-ի րությամբ	2,699,516	4,619,543	1,938,548	6,722	289,514	72,687	18,057	9,644,587
Ավելացում	-	219,359	774,124	-	235,267	709,507	-	1,938,257
Նտարում, վերադասակարգում	-	(265,836)	-	-	(12,381)	(623,545)	(18,057)	(919,819)
022թ. դեկտեմբերի 31-ի րությամբ	2,699,516	4,573,066	2,712,672	6,722	512,400	158,649	-	10,663,025
Նուտակված մաշվածություն								
021թ. հունվարի 1-ի րությամբ	-	598,832	1,687,148	11,828	133,358	-	31,048	2,462,214
արվա ծախս, ներքին շարժ	-	77,228	425,428	1,596	81,193	-	6,492	591,937
Վերագնահատումներ	-	(676,060)	(2,022,886)	(13,302)	(207,655)	-	(37,540)	(2,957,443)
021թ. դեկտեմբերի 31-ի րությամբ	-	-	89,690	122	6,896	-	-	96,708
արվա ծախս, ներքին շարժ	-	68,225	824,078	6,600	171,163	-	-	1,070,066
Նտարում		-	(90,389)	-	(7,500)	-	-	(97,889)
022թ. դեկտեմբերի 31-ի րությամբ	-	68,225	823,379	6,722	170,559	-	-	1,068,885
Մաշվեկշռային արժեք								
021թ. դեկտեմբերի 31-ի րությամբ	2,699,516	4,619,543	1,848,858	6,600	282,618	72,687	18,057	9,547,878
022թ. դեկտեմբերի 31-ի րությամբ	2,699,516	4,504,841	1,889,293	-	341,841	158,649	-	9,594,140

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 363,577 հազ. դրամ (2021թ. 55,231 հազ. դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

Ընկերության հիմնական միջոցների գծով առկա են սահմանափակումներ, որը ներկայացված է ծանոթագրություն 11-ում:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը հիմնական միջոցների ձեռքբերման գծով պայմանագրային պարտականություններ չունի:

5 Կառուցման ընթացքում գտնվող շինություն

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	225,552	9,565
Ավելացում	342,560	215,987
Տարեվերջի մնացորդ	568,112	225,552

6 Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	1,507	100	-	1,607
Ավելացում	11,480	-	-	11,480
Դուրս գրում	(717)	-	-	(717)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,270	100	-	12,370
Ավելացում	-	509	1,300	1,809
Դուրս գրում	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,270	609	1,300	14,179
Կուտակված մաշվածություն				-
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	1,149	100	-	1,249
Տարվա ծախս	1,880	-	-	1,880
Դուրս գրում	(239)	-	-	(239)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,790	100	-	2,890
Տարվա ծախս	1,233	247	658	2,138
Դուրս գրում	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,023	347	658	5,028
Հաշվեկշռային արժեք				-
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,480	-	-	9,480
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,247	262	642	9,151

7 Պաշարներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեղորայք և բժշկական պարագաներ	182,658	251,012
Վառելիք	765	831
Շինանյութ	9,924	43,794
Անավարտ ծառայությունների գծով ծախսեր	17,257	9,599
Այլ պաշարներ	29,291	33,734
	239,895	338,970

8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական վաճառքների գծով	166,777	154,775
Դեբիտորական գործառնական վարձակալության գծով	11,515	7,703
Տրված կանխավճարներ	7,957	19,247
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	1,645	680
Այլ դեբիտորական պարտքեր	3,489	1,083
	191,383	183,488

9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	339	182
Բանկային հաշիվներ (դրամային)	43,873	90,111
Բանկային հաշիվներ (արտարժութային)	18,204	29,763
	62,416	120,056

10 Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանոնադրական կապիտալ	607,370	607,370
	607,370	607,370

Կանոնադրական կապիտալը կազմում է 607,370 հազ. դրամ, որը բաժանված է 121,474 հատ բաժնեմասերի, յուրաքանչյուրը՝ 5000 ՀՀ դրամ, որոնք տեղաբաշխված են և ամբողջությամբ պատկանում է Հայաստանի Հանրապետությանը:

Վերագնահատման պահուստ

Ընկերության հիմնական միջոցները 2022թ. վերագնահատվել են «Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից:

Պահուստային և այլ կապիտալ

Ընկերությունը շահույթի հաշվին ստեղծել է պահուստային կապիտալ 16,420 հազ. դրամ արժեքով, որը օգտագործվելու է վնասների ծածկման. շահաբաժինների վճարման և կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով:

Շահաբաժիններ

Ընկերությունը 2022թ. հայտարարել է 191,709 հազ. դրամ շահաբաժին և վճարել է 2021թ. շահաբաժինը 78, 573 հազ. դրամ՝ համաձայն ՀՀ ԱՆ 2726Ա 28.06.2022թ. հրամանի:

11 Վարկեր

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր	310,154	228,704	182,917	224,917
Փոխառություններ	-	-	-	-
	310,154	228,704	182,917	224,917

Ստորև ներկայացված են վարկերի հաշվեկշռային և իրական արժեքները.

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ				
Վարկեր				
Գրավով ապահովված	182,917	182,917	224,917	224,917
Գրավով չապահովված	-	-	-	-
Ընթացիկ	182,917	182,917	224,917	224,917
Վարկեր				
Գրավով ապահովված	310,154	310,154	228,704	228,704
Գրավով չապահովված	-	-	-	-
	310,154	310,154	228,704	228,704

Վարկերի պայմանները ներկայացված են ստորև.

Պայմանագրի համարը	Արժույթ	Տոկոսադրույքը	Մարման ժամկետ	Մայր գումարի մնացորդ առ 31/12/2022թ.
VP279382	AMD	11.30%	05.11.2029	130,472
VP443192	AMD	13.00%	07.07.2027	45,000
TO040738	AMD	11.50% չօգտ. մասի համար 0.50%	24.05.2024	94,445
TO042241	AMD	13.00% չօգտ. մասի համար 0.50%	13.01.2025	223,154

Վարկերի ապահովման առարկաները ներկայացված են ստորև.

Պայմանագրի համարը	Արժույթ	Գումար	Կնքման ամսաթիվ	Գրավի առարկա
N112005/1	AMD	314,550	05.11.2020	Այլ հիմնական միջոցներ
N112005/2	AMD	1	05.11.2020	Այլ գրավ
N112005/3	AMD	173,000	15.01.2021	Այլ հիմնական միջոցներ
N2238878	AMD	665,275	07.08.2022	Այլ հիմնական միջոցներ

12 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը հետևյալն է՝

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	396,670	445,688
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	(117,473)	(49,018)
Տարեվերջի մնացորդ	279,197	396,670

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետաձգված հարկերը խմբավորում են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2022թ. հունվարի 1	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2022թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Աշխատակիցներին փոխհատուցումների գծով	250,188	23,051	273,239
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստ	-	-	-
Հիմնական միջոցներ	-	-	-
	250,188	23,051	273,239

Հետաձգված հարկային պարտավորություն			
Հիմնական միջոցներ	(646,858)	94,422	(552,436)
Զուտ արդյունք	(396,670)	117,473	279,197

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետաձգված հարկերը խմբավորում են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2021թ. հունվարի 1	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2021թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Աշխատակիցներին փոխհատուցումների գծով	205,459	44,729	250,188
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստ	-	-	-
Հիմնական միջոցներ	-	-	-
	205,459	44,729	250,188
Հետաձգված հարկային պարտավորություն			
Հիմնական միջոցներ	(651,147)	4,289	(646,858)
Զուտ արդյունք	(445,688)	49,018	(396,670)

13 Ակտիվներին վերաբերող շնորհ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	1,078,500	1,181,386
Ստացված շնորհներ	172,564	135,273
Շնորհից եկամուտ	(525,250)	(238,159)
Տարեվերջի մնացորդ	725,814	1,078,500

14 Եկամուտներին վերաբերող շնորհ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	184,005	147,129
Ստացված շնորհներ	556,625	740,262
Շնորհից եկամուտ	(688,546)	(703,386)
Տարեվերջի մնացորդ	52,084	184,005

15 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր գնումների գծով	730,017	445,164
Կրեդիտորական պարտքեր գործառնական վարձակալության գծով	205	-
Ստացված կանխավճարներ	18,098	9,678
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	86,433	64,784
Աշխատավարձի գծով պարտք	202,817	151,588
Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով	191,709	78,573
Այլ կրեդիտորական պարտքեր	862	206
	1,230,141	749,993

16 Ընթացիկ պահուստներ

Ընթացիկ պահուստը իրենից ներկայացնում է Ընկերության աշխատողների կուտակված փոխհատուցելի բացակայությունների գծով մնացորդը, որը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1,521,586 հազ. դրամ, իսկ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1,393,522 հազ. դրամ:

17 Հասույթ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Պետ. պատվերի գծով ծառայությունների մատուցումից հասույթ	3,068,660	2,782,884
Վճարովի բժշկական ծառայությունների գծով հասույթ	2,561,655	2,092,909
Այլ	615	2,512
	5,630,930	4,878,305

Բժշկական ծառայությունների գծով հասույթը ամբողջությամբ մատուցվում է ՀՀ, Երևան քաղաքում գտնվող բժշկական կենտրոնում:

18 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ուղղակի նյութական ծախսումներ	486,054	497,858
Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով	3,486,261	2,976,534
Մաշվածություն և ամորտիզացիա	484,652	322,349
Կոմունալ ծախսեր	171,970	157,414
Այլ	249,849	298,868
	4,878,786	4,253,023

19 Այլ եկամուտներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարձակալությունից եկամուտ	73,846	56,257
Հիմնական միջոցների վաճառից եկամուտ	1,460	1,286
Շնորհներից եկամուտ	1,140,576	932,547
Այլ եկամուտ	589	160
	1,216,471	990,250

20 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վարձատրության ծախսեր	370,472	437,144
Մաշվածության և նորոգման ծախսեր	52,255	26,266
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	1,680	2,800
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	50,743	40,828
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	30,492	9,585
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	120	1,200
Բանկային ծառայության և ապահովագրական ծախսեր	3,103	2,497
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	14,212	15,433
Այլ ծախսեր	16,142	5,991
	539,219	541,744

21 Այլ ծախսեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական միջոցների օտարումից ծախսեր	87	24,422
Տույժ, տուգանքներից ծախսեր	4,362	8,375
Շնորհ ստացված ակտիվների մաշվածություն	525,250	273,209
Շնորհ ստացված ակտիվների գծով ծախսեր	422,254	570,107
Դուրսգրված դեղորայք	76,087	-
Այլ ծախսեր	25,408	9,859
	1,053,448	885,972

22 Ֆինանսական ծախսեր, զուտ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական եկամուտ	207	-
Ֆինանսական ծախս	(17,371)	18,229
	(17,164)	18,229

23 Այլ ֆինանսական հոդվածներ, զուտ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	10,269	5,999
Փոխարժեքային տարբերությունից վնաս	(6,692)	(1,353)
	3,577	4,646

24 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	103,958	76,675
Հետաձգված հարկ	(117,472)	(49,018)
	(13,514)	27,657

Հաշվետու տարվա համար ՀՀ շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18 % (2021թ.՝ 18 %)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	362,263		174,329	
Շահութահարկ 18% (2021թ. 18 տոկոս)	65,207	18.00	31,379	18.00
Չնվազեցվող ծախսեր	(78,721)	(21.73)	(3,722)	(2.14)
Շահութահարկի գծով ծախս	(13,514)	(3.73)	27,657	15.86

25 Ֆինանսական գործիքներ

25.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.13-ում:

25.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր	178,292	162,478
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	62,416	120,056
	240,708	282,534

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր	493,071	453,621
Առևտրային կրեդիտորական պարտքեր	730,222	445,164
	1,223,293	898,785

26 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

26.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է տոկոսադրույքային, արտարժութային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

բ) Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով, հետևաբար ենթարկվում է արտարժույթային ռիսկին: Արտարժութի փոխարժեքային տատանումներից կախվածությունը հիմնականում առաջացել է դեբիտորական պարտքերից և առևտրային կրեդիտորական պարտքերից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ հաճախորդը կամ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել:
Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Ընկերության առևտրային դեբիտորական պարտքը ներկայացնում է բուժ. ծառայությունների դիմաց ստացվելիք գումարները՝ հիմնականում Պետական Առողջապահական Գործակալությունից և ապահովագրական ընկերություններից ստացվելիք գումարները: Ընկերությունը դեբիտորական պարտքերի գծով երաշխիքներ չի պահանջում: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

դ) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

Ընկերությունն ունի արտարժույթով գնանշված հետևյալ ֆինանսական գործիքները.

Հոդված 2022թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր	175,022	3,270		-
Դրամական միջոցներ	44,212	8,342	9,842	20
	219,232	11,612	9,842	20
Ֆինանսական պարտավորություններ				
Վարկեր	493,071	-	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	707,676	7	20,778	1,761
	1,200,747	7	20,778	1,761
Զուտ արդյունք	(981,513)	11,605	(10,936)	(1,741)

Հոդված 2021թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր	162,456	22		-
Դրամական միջոցներ	90,294	28,298	112	1,352
	252,750	28,320	112	1,352
Ֆինանսական պարտավորություններ				
Վարկեր	453,621	-	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	422,751	-	20,870	1,543
	876,372	-	20,870	1,543
Զուտ արդյունք	(623,622)	28,320	(20,758)	(191)

Ընկերությունը ենթարկվում է ԱՄՆ դոլարի փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի 10% (2021թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2021թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2021թ.՝ 10%):

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի, դիրհամի ազդեցություն		Ռուբլու ազդեցություն	
	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	1,161	2,832	(1,094)	(2,079)	(174)	(19)

27 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա:
Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվներն ու արտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Առևտրային դեբիտորական պարտքեր	178,292	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Վարկեր	493,071	*Ընթացիկ* Բանկային վարկերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 2	11.30-13 % ՀՀ դրամով մնացորդների համար
Առևտրային կրեդիտորական պարտքեր	730,222	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ

28 Կապիտալի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 11-ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա:

Հաշվարկը ներկայացվում է ստորև.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	6,295,480	6,117,224
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(62,416)	(120,056)
Կապիտալ	6,233,064	5,997,168
Ընդհանուր սեփական կապիտալ	6,295,480	6,117,224
Վարկեր և ֆին. վարձակալություն	493,071	453,621
Ընդհանուր ֆինանսավորում	6,788,551	6,570,845
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.92	0.91

29 Պայմանականություններ

29.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

29.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Ընկերությունն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Ընկերությունն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

29.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, հարկային մարմնի պարզաբանումներով, որոնք կարող են հակասական կամ տարընթերցումների տեղիք տալ: Հարկային մարմինները կարող են ստուգումների արդյունքում տույժ, տուգանքներ նշանակել: Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության՝ իր մեկնաբանությունների վրա: Սակայն հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և եթե դրանք հաստատվեն, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

29.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները, և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում, շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն և օրենդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

29.5 Դատական հայցեր

2022թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական հայցերն են.

1. Թիվ ԵԴ2/1302/02/23 քաղաքացիական գործն ըստ Հայցի «ԻՐԱ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ն ընդդեմ ՈՒԱԿ-ի իրավունքի ճանաչման և պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին:
2. Թիվ ԵԴ/7351/02/23 քաղաքացիական գործն ըստ Հայցի ՈՒԱԿ-ն ընդդեմ Իրա Մեդիքլ Գրուպ ՓԲԸ-ի գործարար համբավը արատավորող հրապարակային զրպարտություն համարվող հայտարարությունը նույն եղանակով հերքելու պահանջի մասին:
3. Թիվ ԵԴ/55503/02/22 քաղաքացիական գործն ըստ Հայցի Արևհատ Խաչիկի Հարությունյանն ընդդեմ ՈՒԱԿ-ի Հայցվորի աշխատանքային գործառույթների /պարտականությունների/ աշխատավարձի վճարված հարկերի և պետական սոցիալական ապահովության վճարումների չափի և աշխատանքի գնահատականի վերաբերյալ տեղեկանքի, հայցվորի անձնական տվյալների և դրանց մշակման վերաբերյալ տեղեկատվության, ինչպես նաև հայցվորի անձնական տվյալներ պարունակող յուրաքանչյուր գրառման պատճենի հայցվորին տրամադրելը պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին:
4. Թիվ ԵԴ/55241/02/22 քաղաքացիական գործն ըստ Հայցի Արևհատ Խաչիկի Հարությունյանն ընդդեմ ՈՒԱԿ-ի 22.08.2022թ. թիվ 180-Ա հրամանը անվավեր ճանաչելու, հայցվորին իր նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի ժամանակահատվածում հայցվորի միջև աշխատավարձը պատասխանողից բռնագանձելու, իսկ տնտեսական տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ պատասխանողի և հայցվորի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում պատասխանողին՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար հայցվորի միջին աշխատավարձի չափը, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, վճարել պարտավորեցնելու և հայցվորին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ միջին աշխատավարձի 12-ապատիկի չափով

5. Թիվ ԵԴ/49822/20/22 քաղաքացիական գործն ըստ Հայցի Արևհատ Խաչիկի Հարությունյանն ընդդեմ ՈՒԱԿ-ի պատասխանողին հայցվորի հետ լրիվ վերջնահաշվարկ կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին:
6. Թիվ ԵԴ/24848/02/22 քաղաքացիական գործն ըստ Հայցի Անահիտ Սլավիկի Գրիգորյանն ընդդեմ ՈՒԱԿ-ի 07.04.2022թ. թիվ 70-Ա հրամանը անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար գումար բռնագանձելու պահանջի մասին:
7. Թիվ ԵԴ/65312/02/22 քաղաքացիական գործն ըստ Հայցի Մարիետա Սամվելի Բաղդասարյանն ընդդեմ ՈՒԱԿ-ի 24.10.22թ.-ի աշխատանքից ազատելու մասին հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասին:
8. Թիվ ԵԴ/7329/02/22 քաղաքացիական գործն ըստ Հայցի Մարիետա Արտավազդի Նալբանդյանն ընդդեմ ՈՒԱԿ-ի Աշխատանքից ազատման հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնվելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի չափով գումարի բռնագանձման պահանջի մասին:
9. Թիվ ԵԴ/0438/02/23 քաղաքացիական գործն ըստ Հայցի Մարիետա Արտավազդի Նալբանդյանն ընդդեմ ՈՒԱԿ-ի Աշխատանքից ազատման հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնվելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի չափով գումարի բռնագանձնման, նախկին հաստիքում վերականգնելու անհնարինության դեպքում աշխատանքում չվերականգնելու դիմաց միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով հատուցման գումարը բռնագանձելու պահանջի մասին:
10. Թիվ ԵԴ/32351/02/21 քաղաքացիական գործն ըստ Հայցի Մարինա Գրիգորի Փանոսյանն ընդդեմ ՈՒԱԿ-ի աշխատանքից ազատելու հրամանը անվավեր /չեղյալ/ ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և արկադիր պարապուրդի գումարները վճարելու պահանջի մասին:
11. Թիվ ԵԴ/6017/02/21 քաղաքացիական գործն ըստ Արաքսյա Արամի Հովհաննիսյանն ընդդեմ ՈՒԱԿ-ի իրավական ակտը հայցվորի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անվավեր ճանաչելու, հայցվորին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի համար միջին աշխատավարձը գանձելու պահանջների մասին:
12. Թիվ ՎԴ/0786/05/23 վարչական գործն ըստ Հայցի ՈՒԱԿ-ն և Նարեկ Վարուժանի Մանուկյանն ընդդեմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 24.10.2022թ. թիվ 0337 կարգադրագիրը, ինչպես նաև որպես հետևանքներ՝ 11.01.2023թ. թիվ 02/530-2023 որոշումը և 02.12.2022թ. թիվ 2130 որոշումը վերացնելու պահանջների մասին:

30 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

2022թ. Ուկրաինական հակամարտությունը շատ արագ տարածվեց, ինչը մեծ ազդեցություն ունի և դեռևս կունենա ամբողջ աշխարհի վրա:
Վերոնշյալ իրադարձությունը կարող է հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

31 Գործարքներ կապակցված կողմերի հետ

31.1 Վերահսկողություն

Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը: Ընկերության բաժնետոմսերը կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազոր անձի՝ ՀՀ Առողջապահության նախարարության կողմից:

Պետական բյուջեից ստացված ֆինանսավորումը բացահայտվել է ծանոթագրություն 17-ում:

31.2 Գործարքներ ղեկավարության հետ

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմին տրված փոխհատուցումներն են.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ	52,428	42,350
	52,428	42,350

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 20-ին՝

Տնօրեն Նարեկ Մանուկյան

Գլխավոր հաշվապահ Հասմիկ Հանեսյան